

4206

Ubel year journal
U for
year's end

1919

891.71

U-55


6-1913

5058

1914 № 581

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԵՐԱՅԻՆ
ՀԵՄԻՄԵՆՏԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՇՐՋԱՆԱԿԱՆ



Ս Ի Ր Ո Յ Տ Ա Ն Ջ Ի Ա Ն Ը

12083

Թարգմանություն Ռուսերէնից

ԳԻՆՆ Է 10 ԿՕԳ.



ԵՐԵՎԱՆ

Տպարան «ԼՈՅՍ» Արշակ Յակոբյանի սրգիք
1913 թ.

841-71
6-55

6068

891.71

U-55

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԴՈՒԼՆԵՐՆԵՐ

КАНОТЕРА
ИСТИТА
ТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

Մ Ի Բ Ո Յ Տ Ա Ն Ջ Ի Ա Ծ Ը

Թարգմանութիւն Թուսերէնից



ԵՐԵՎԱՆ

Տպարան «ԼՈՅՍ» Արշակ Յակոբեան և որդիք

1913 թ.

2011

ՍԻՐՈՅ ՏԱՆՁԻԱԾԸ.

Մէրը լավ բան է եթէ կատարուի.
Նա արեգակի նման կը փայլի.
Սիրոյ կայծերը երբեք չեն հանդչի
Մինչև որ մարդս գերեզման մտնի:

50231-ա/հ



36045-66 4

Ծածկուած լուսամուտի շքեղ դահլիճից հնչում էր երջանիկ պարերի հնչիւնները մատաղ սերունդը զլարճանում էր այդ քաղցր նւագածութեան մէջ:

Այստեղ ուրախանում էին երջանիկները, բայց այնտեղից ոչ հեռու կամուրջի վրայ կանգնած էր մի սուէր որը փակել էր իւր գեղեցիկ աչքերը, բամբակ էր խրել ականջները որ չը կարողանա տեսնել և լռակ այն երջանկութեան երգն ու երաժշտութիւնը որից նա վաղուց արդէն զրկւել էր: Նա տարակուսւած ուշադրութիւնը զգած արեկոճւած ծովի կապոյտ մակերևոյթին որը կարծես կանչում էր նրան թէ—«արբես քեզ տեղ կանեմ իմ սառ կոհակների տակ ուր և յաւիտենական հանգիստ կը դռնես:

— Ա՛խ լռեցէք, լռեցէք. լռեց նրա վշտացած ու արցունքից խեղդւած ձայնը. երաժշտութեան այդ թախծալի հնչունները կտրատում են իմ սիրտը ես չեմ ուզում լսել ոչինչ, կուրացէք աչքեր չեմ ուզում այս թունաւոր աշխարհում տեսնել ոչինչ որտեղ այն -

պէս սառն է, որտեղ մարդիկ այնպէս անգութ են. և այդ ժամանակ նա չոքեց գեանին ու արտասուլիցաչքերը յառելով դէպի երկինք, և նրա վարդազոյն շրթունքները մրմնջում էին ինչ որ աղօթքի նման խօսքեր, անձև ու անորոշ. ինչ անիլ նետուել ծոփը, և մի վարկեանում վերջ դնել ամեն ինչին... Ահ սարսափելի տէր Աստուած ներիր ինձ ներիր և այդպէս շարունակ անորոշ զրութեան մէջ նա կանգնած արեկոծւած ծովէ հզերքին հեկեկում էր ու լուռ աղօթում:

Նա դեռ 18 տարեկան մի գեղեցիկ աղջիկ էր, նա դեռ նոր էր ոտքը դրել կեանքի շէմքին, որտեղից նա պիտի ճաշակէր կեանքի վայելչութիւնը, նա դեռ նոր էր ճանաչում աշխարհի չարն ու բարին. նա հէնց առաջին հանդիպածից սիրեց նրան այն դարդացած երիտասարդին, որը խօստացել էր ամուսնանալ և դրանով երջանկացնել իրեն, բայց խօստումը մնում էր խօստում և այդպէս շարունակ խաբելով խեղճ աղջկան, և հիմա էլ թողած նրան անտէր անպաշտպան, ու արտասուրւած հեռացել էր նրանից:

«Չկա սիրոյ մէջ երջանկութիւն. այդ խօսքը նրան ասել էր մի փորձւած պառաւ կին:

Բայց նա, Մարուսեան, այդպէս էր այդ աղջկաց անուներ. նա հեզում էր պառաւի սասճներին նա չէր հաւատում նրան. ինչպէս կարող է սիրոյ մէջ երջանկութիւն չը լինել, նա փափագում էր տեսնել սիրոց երջանիկ, կամ ապերջանիկ վարկեանները, և արժանացաւ:

Սէրը բաց արեց նրան գիտակցութեան մի նոր

աշխարհը, նա նոր ճանաչեց աշխարհի չարն ու բարին հէնց առաջին անգամ երբ այն երիտասարդ պարոնը մօտեցաւ Մարուսիային և ասաց «ես քեզ սիրում եմ, սիրում եմ յաւիտենական սիրով», Մարուսեան կարծում էր թէ դա մի երազ էր, ինչպէս կարող էր պատահել որ հարուստ ու զարգացած մարդ սիրէր իրեն, մի աղքատ ընտանիքի աղջկայ որ ինքը Մարուսեան էր. միթէ կարող էր պատահել այդ. և նա այդ բոլորը յիշելով խորասուզւած էր մտքերով, սկսում էր մտածել նրա մասին բայց ուշ էր արդէն:

Նա միայն յիշելով այդ բոլորը մերթ մերթ կըրկընում էր վշտացած ձայով հետեւալ խօսքերը:

— Այս Գանս, Գանս ինչ՞եւ դու այդպէս վարվեցիր ինձ հետ անգութ, ինչ՞եւ իմ պատիւս հաւատարացրիր փողոցներում թափառող բարոյական զգացումներից դուրկ կանանց պատիւն, ինչու այդպէս վարեցիր անիրաւ Գանս...

Այո ես պիտի մեռնեմ, կորչեմ, որովհետեւ ես արհամարեւած եմ բոլոր մարդկանցից, զրկւած պատէից ու բարոյական զգացումից, ես փողոց շարուած մի սղորմելի արարած եմ որին ոչ ոք չի վերցնի իր մօտ բոլոր մարդիկ ինձնից երես եւ դարձրել, ինչ անեմ, միայն մեռնել և ազատուել այդ թշուա կեանքից:

Նա հետզհետէ սարսափում էր, երբ յիշում էր որ պէտք է վերջ տար իր կեանքին, կորչեր ծովի սառը ալիքների տակ իր յանցանքը քաւելու համար կարծես ներքեւում նրա ոտների տակ արեկոծուող ծովի կատաղի ալիքները անարկու որոտումներով կանչում էին

նրան «եկ, եկ, եկ այստեղ մեր ծոցում հանդիստ կաք
քեզ, և վերջ կը տրւի տանջանքներդ»:

Այն այսօր վերջ կը դրւի իմ կեանքիս, իմ տա-
ռապանքիս, այո այսօր, որքան շուտ այնքան լաւ
հանգիստ, հանգիստ կառնեմ ջրի այն խորութեան
մէջ ուր ինձ տեսնողներ չեն լինի. և այդ ասաց ու
վճռականապէս քայլերը ուղղից դէպի արեկոծուող ծովը
քայց նա յանկարծ կանգ առաւ. այդ բոպէին նրան
լսելի էր լինում մի ներքին ձայն որը այնպէս գո-
ռում էր.

— Ոճրագործ ոճրագործ...

— Երեխէն երեխէն...

Ո՞վ է սա մըմեջաց Մարուսեան. միթէ սա ամե-
նարարձրեալի ձայնն է. նա շփոթեալ կանգնեց ճանա-
պարհի կէսին և չէր կարողանում մի քայլ անգամ անել
քանի որ նրա ականջին հասնում էին հեանեալ խօս-
քերը.— խեղճ արարած քո կեանքիդ փրկութեան հա-
մար զոհում ես մի ուրիշ անմեղ մարմին, նա, որ քո
արզանդում սնւում է և զուցէ շուտով լոյս աշխարհ
գայ, և դու քո յանցանքդ քաւելու համար, քո կեան-
քիդ փրկութեան համար զոհում ես մի անմեղ արա-
րած, որի գոյութեան պատճառը դու ես եղել և դու
այդ բոլորը անում ես առանց խղճի խայթ զգալու:

Մարուսեան երկար մտածելուց յետոյ, գլխիկոր
հեռացաւ նա ծովափից, թողնելով այնտեղ մահ և ոճիր:

Նա թէ վշտից, և թէ բողբոջ յուսանաւած դի-
մեց դէպի քաղաք. ամբողջ օրը նա ոչինչ չէր կերել
զնալ քաղաք առանց մի կոպէկի, ինչ անել, սնմից

խնդրել, մուրացկանութեան սովոր չէր նա քաղցից և
յոգնածութիւնից ուշաթափում էր. բայց յանկարծ
մտաբերից որ անցնի երկու փողոց, այնտեղ կայ հիւ-
քանոց աղքատների համար. զնալ այնտեղ նա այնտեղ
կը գտներ իր նմաններին:

Կէս ժամից յետոյ Մարուսեաի տատանուող քայ-
լերը ներս մտան հիւրանոց ուր նա էլ խառնեց այն-
տեղ հաւաքած իր նման թափառական խեղճերին նա
տաւջին անգամ էր այդպիսի կեանք անցկացնում և
միշտ աշխատում էր երեսը ծածկել սրպէսդի իրեն-
չը ճանաչեն և ուշադրութիւններ չգրաւէ:

Գուռը բացեց և Մարուսեային ներս հրաւիրե-
ցին, նրան առաջնորդեցին մի մութ ու խոնաւ սեն-
եակ որտեղ դրւած էր չոր ծղոտներով ծածկւած մի
փայտեա մահճակալ որի վրայ նա պէտք է անց կա-
ցներ այդ գիշեր. Մարուսեան սաստիկ ծարաւել էր
նա վեր կացաւ կամացուկ մօտեցաւ կողքի կից սեն-
եակին և խնդրեց խնամակալուհուց մի բաժակ ջուր
խնամակալուհին տեսնելով Մարուսեայի դուռը գրու-
թիւնը խղճահարեց ու ներս հրաւիրեց ճաշի Մարուս-
եայի սիրտը կտրատում էր քաղցից նա ախորժա-
կով կերաւ իսկ հացի միւս մնացորդներն էլ հաւա-
քելով զնաց կրկին իր խոնաւ սենեակը:

Նա ամբողջ գիշերը չաքչաւում էր իր ծղոտե-
անկողնու մէջ, նա ամեն կերպ աշխատում էր մի ելք
գտներ այդ գրութիւնից ազատելու համար սակայն
ճակատագիրը նրան այդ էր տուել:

ՄԱՐՈՒՍԻԱԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

II

Մարուսեան մի աղքատ ընտանիքի աղջիկ էր նրա կեանքի պատմութիւնը շատ տխուր էր նա դեռ մանուկ հասակից ընկեր եղաւ թշուառութեան հետ, նա շատ վաղ զրկուեց իր ծնողներէց, և նա մնալով բոլորովին անօգնական և իր գոյութիւնը մի կերպ քաշ տալու համար, ստիպուած եղաւ մանկ ծառայութեան, և կարճ ժամանակում նա մեծ յաջողութիւն գրտաւ առևտրական գործում, նա շատ շուտ գրաւեց բոլոր յաճախորդները ուշադրութիւնը թէ իր ճարպկութեամբ գործի մէջ և թէ իւր գեղեցկութեամբ:

Չնայած նա թէ խանութի միւս ծառայողներէ և թէ բոլոր յաճախորդներէ համար մի համակրելի դէմք էր, բոլորը սիրում յարգում էին նրան. սակայն այդ բոլորը նրան չէր հետաքրքրում, նրա համար ձանձրւալի էր երբ կրկնուում էր նրա աչքի առաջին նոյն կեանքը, նոյն յաճախորդները և ոչ մի փոփոխութիւն. խանութը լցում էր ամեն օր յաճախորդներով:

Մէկ օր խանութի խորքից յանկարծ լսում է խանութատիրոջ խրպոտ ձայնը:

— Մարուսեայ այստեղ գալստուկներ են ուղում եւ Մարուսեան շտապում է այն կողմը տեսնում է մի երիտասարդ որը կարծես սպասում էր որ Մարուսեան պէտք է բերեր գալստուկները:

Մարուսեայի մարմնով մի սառսուռ անցաւ երբ տեսաւ շքեղ հագնւած մի երիտասարդ է իրեն սպասողը:

— Ի՞նչ էք կամենում պարոն հարցրեց օրիորդը: քայց երիտասարդը ոչինչ չպատասխանեց նա խորասուզած մտքերի մէջ լուռ նայում էր օրիորդին իսկ Մարուսեան նորից կրկնեց:

Իսկ այդ միջոցին երիտասարդն սկսաւ լուռ ու մուռնջ, ջոկել գալուստիկներ առանցի հեռացնելու իւր հայացքը օրիորդից:

— Երիտասարդը գնելով մի քանի գալուստիկներ և ցոտեսութիւն ասելով դուրս եկաւ խանութից և անցնելով խանութի միւս կողմը և սկսեց հետաքրքրիչ նայել դէպի խանութը մինչև որ նա կշտացաւ նայելուց:

— Միւս օրը դարձեալ եկաւ այդ երիտասարդը և պահանջեց սպրանքներ, որը շատ ջոկելուց յետոյ գնեց մի քանի բաներ և տուեց իւր այցետոմսը խնդրելով օրիորդին որ ուղարկի իւր առած սպրանքը իրան բնակարանը: Գնալու ժամանակ մի այնպիսի հայացք թողեց Մարուսեայի վրայ, որն կարծես ամեն բան մտաւայաւ, գնալուց յետոյ Մարուսեան շատ երկար մտածեց իրան թշուառ կեանքի վրայ թէ արդեօք ինչու դառն էր պիտի լինէր մի հասարակ մարդ, ոչ թէ հարուստ Իշխան, որով ցոյց էր տալիս նրա այցետոմսը որք վրա գրւած էր այսպէս:

Графъ Гансъ фонъ-Редернъ.

— Մէկ օր երբ խանութը փակելուց յետոյ Մա-

բուսեան ուղևորում էր տուն յանկարծ դէմ առ դէմ պատահեց երիտասարդին որն անմիջապէս կտրեց նրա ճանապարհը:

Քաղաքաւորի բարեկույց յետոյ ինդրեց թոյլ-տուութիւն ընկերակցելու մինչև տուն. խորին շնորհակալեմ յարգելի պարոն, ասաց Մարուսեան կարմրելով: Ես մենակ էլ կերթամ ահա իմ կառքս այստեղ ինձ է սպասում. բարի գիշեր ասելով նստում է կառքը և գնում. յետ է նայում տեսնում է որ պարոնը ուշադրութիւնը դէպի իրան է դարձրել և ինքն իրան մտածում է, ինչու թոյլ չը տւի որ ինձ ճանապարհորդէ այդ պարոնը:

— Չանցաւ երկու օր Մարուսեան ստանում է մի նամակ, որը գրում է պարոնը այսպէս:

Յարգելի օրիորդ!

Դուք առաջին անգամից թողեցիք ինձ վերայ մի այնպիսի զգացմունք, որը ես չեմ կարողանում տանել. ես ստիպւած եմ լինում ամենօր գալ ձեր խանութը որպէս զի տեսնել ձեզ հաւանանք ձեզ չեմ հանգստանում միայն դուք էք իմ երջանկութիւնը, յատուկ խնդրում եմ ձեզանից որ չը մերժէք և բարեհաճեցէք գնանք վաղը մի օպերա-ի լսելու, խնդրում եմ չը մերժէք և երկու խօսքով ինձ պատասխանէք:

յարգանօք Գանս ֆօն Բեդերն:

— Մարուսեայի սիրտը սկսաւ ուրախանալ, որ իշխանը իրան սիրում է դա էլ այդ էր ցանկանում և

սպասում այդ երջանիկ օրին. Թէև Մարուսեան շատ էր ցանկանում տեսնել օպերա-ն բայց նա վախենում էր որ ծանօթանալ այդպիսի պարոններէ հետ, որովհետև նրա սիրելի մայրը շատ էր խնդրում որդուն ասելով որդիս խնդրում եմ որ երբէք չունենաս գերծ այդպիսի մարդկանց հետ, որովհետև այդպիսի մարդիկ միշտ յափշտակում են իրենց խորամանկ սէրով առատաւորում և հեռանում են զգուշացիր:

— Մարուսեան մտածում էր թէ ինչ պատասխան գրի այդ ըստացած նամակին, և այդպէս մտածելով նա գնաց խանութ:

Երեկոյեան Մարուսեան խանութից դուրս եկաւ և ուղևորում էր տուն յանկարծ անկիւնից դուրս եկաւ Գրաֆն և մօտենալով օրիորդին ասելով յարգելի օրիորդ ինչով եմ ես մեղաւոր որ դուք ինձանից ցոյգպէս քաշում էք և չէք ուզում նոյն իսկ նամակիս պատասխանել: Վերջապէս ես ստիպւած եմ լինում ամենօր գալ ձեր խանութի առաջ և սպասել ժամերով մինչև որ տեսնեմ ձեր թանկագին երեսը, որը ինձ համար թանգ է ամենից. խղճացէք վերջապէս դուք էք իմ վերջին միակ փրկիչս, որը կարողանայ իմ խոցուած սիրտս հանդսաացնի:

Կարծես կրակ լցեց օրիորդի սիրտը այդ խօսքերը լսելով, ապուշի ուէս նայում էր նրան թէ արդեօք ինչ պատասխանի:

Դեռ Մարուսեան նոր էր ուշքի գալիս երբ յանկարծ պարոնը բռնեց Մարուսեայի ձեռքը և մօտեցրեց իւր շրթունքներին ջերմ համբուրելով ասաց:

Մարուսեայ հոգիս դու մի կաբժիլ թէ ես ուզում եմ քեզ խաբել և անբախտացնել, մի հաշուր ինձ ինչպէս սրիկայ խնդրում եմ ասացէք ինձ շուտով դուք կամենում էք լինել ինձ կին թէ չէ. այդ է իմ խընդիրս ձեզանից:

Թէև ես գիտեմ իմ ծնողներս հակառակ կլինեն իմ այս արած քայլի վերա, բայց ինձ համար միևնոյն է, լինել ծնող կամ չը լինել այդ միևնոյն է միայն դու որ համաձայնես ինձ կին դառնաս:

Մարուսեան ուրախութիւնից չէր իմանում ինչ պատասխանի երբ գրաֆը գարձեալ բռնելով օրիորդի ձեռքից համբուրելով հարցրեց, ինչու չես պատասխանում իմ աղաւեսեակս ամուր սեղմելով դէպի իրան օրիորդի շրթունքները:

Այս Գանս ասում էր նա միթէ դու ասում ես այդ բոլորը ճիշտը ես մի մի հասարակ դասակարգի աղջիկ և յանկարծ լինեմ գրաֆին կին դա ես չեմ կարողանում հաւատալ:

Այո Մարուսեայ յաւիտենական ամուսինեք պիտի լինենք մինչև մեր խորին ծերութիւնը:

Այս ինչքան կուրախանայ իմ թշառ մայրս երբ կիմանայ այս ուրախ համբաւը:

Կարծես մի բան անցաւ Գրաֆի մտքոյը ե ասաց յանկարծ, գիտես իմ աղաւեսեակս մեր այս գաղտնիքը ոչ ոքի չասես մինչև որ համաձայնութիւն ըստանամ ես իմ ծնօղներիցս, այն ժամանակ ես կասեմ քեզ ամեն բան:

Բայց չէ որ մայրս անպատճառ պիտի որ իմանայ, ոնց ես թագցնեմ նրանից այդ ուրախ համբաւը որին նայ փափագում է:

Մայրիդ իհարկէ կարելի է ասել բայց ուրիշ խնդրում եմ չասես:

Մարուսեան այսօր սովորականից ուշ վերադարձարձաւ տուն, բայց երբ Մարուսեան մտաւ սենեակ հայրն զայրացած դիմաւորեց ու հարցրեց Մարուսեային Որտեղ էիր այսքան ուշ:

Մարուսեան յիշեց գրաֆին տւած խօսքը որը պատուիրել էր որ չասի ոչ ոքի բան; և ստիպւած եղաւ կեղծելու և ասաց հայրիկ խանութից բան էն տւել ինձ որ տանեմ մուշտարու տունը, դրա պատճառաւ ուշացամ հայրը հաւատարով դուստրին և առանց ուրիշ այլ հարցեր տալու հայրը համբուրեց դուստրին և դնաց իւր սենեակը:

Մարուսեան ուրախացաւ որ հայրն իսկոյն խաբւեց և ինքն վաղեց մօր սենեակը ուրախ համբաւներ տալու մօրը գրաֆի մասին պատմում էր նա:

— Դու ասում ես Գրաֆ է որդի, բայց օ որդիս խղճայ ես պառաւ մօրդ և հօրդ, և մի անբաղտացրուք երիտասարդ կեանքդ քանի որ դու նոր պտի մտնիս կեանքի մէջ: Ոչ մայրիկ ջան դու չես իմանում թէ ինչպէս է նա սիրում ինձ և դու ինքդ այն ժամանակ կասես թէ դնա և սիրի այդ աղջիւ պարոնին որը կտայ քեզ յաւիտենական ուրախ կեանք: Մայրը լսելով այս խօսքերը. ասաց, որդի տայ Աստուած որ այդպէս լինի ինչպէս որ դու ես ցանկանում: Ես էլ

ինչպէս ծնող մայրդ ցանկանում եմ բարի վայելումը, ես էլ իմ կողմից կը խնդրեմ գրաֆին որ քեզ ուրախ պահի որ ամօթով չըմնաք մինչև ձեր խորին ծերութիւնը:

Մարուսեայի համար օրը դառնում էր տարի և չարաչար սպասում էր թէ երբ պիտի փակեն խանութը մի գնայ և տեսնուի սիրելու հետ:

Մէկ օր Մարուսեայն ըստանում է մի նամակ որը գրում է մի մեծ գործակատար իրենց խանութից, որտեղ ծառայում է Մարուսիան և խնդրում է Մարուսեայի ձեռքը բայց օրիորդը մերժում է այդ և գրում է այսպէս:

Յարգելի պարոն!

Ներէցեք ձեր առաջարկութեանը չեմ կարող պատասխանել, որովհետև ես արդէն ծածուկ ամուսնեցած եմ մի պարոնի հետ, եթէ ոչ մեծաուրախութեամբ կընտուներ ձեր առաջարկութիւնը: Յտեսութիւն, «Մարուսեայ»:

Մեծ դարմանք պատճառեց Մարուսիային երբ որ նա լսեց որ այդ պարոնը իրան ատրճանակի հարւածով վիրաւորել է իրա պատճառով և Մարուսեայն ընկաւ խոր մտածմունքի մէջ, համարեա ամեն բան մոռացել էր:—Նրբ մէկ օր Գրաֆին հարցրեց թէ ինչու գու աչքպէս տխուր ես, և նա ծածկելով ասաց թէ իմ մայրը տկար է դրա համար էլ տխուր եմ շուտով կանցնի:

Մէկ օր խանութից դուրս գալիս նա հանդիպում է գրաֆին բայց մեծ է լինում Մարուսեայի դարմանքը երբ որ տեսնում է նրա հետ մի ուրիշ պարոնի, կանգնած սպասելիս նրան: Գրաֆն իսկոյն մօտեցաւ և

ձանօթացրեց պարոնի հետ: Որտեղ հիմա գնանք մենք, գնանք եթէ կուզէք հիւրանոց ընթրիք անելու, բայց այդ ժամանակ Մարուսեայն յօնքերը կիտեց այդ զարմանալի բանը լսելով, բայց տեսնելով որ իր սիրելին նեղանում է և նա համաձայնեց, ի միջի այլոց քանի որ նրանց հետ կար մանաւանդ մի երբորդ մարդ:

Հետնորդ անձանօթ պարոնը ներգութիւն խընդրեց որ ինքը մի քանի ըոպէով հեռանում է շտապ գործով և հինգ ըոպէից յետոյ կգամ որ գնանք ընթրիք անելու:

Չանցաւ մի քանի վայրկեան եկաւ պարոնը, և նրանք երեքով գնացին գրաֆի կացարանը ենթելու:

Մարուսեայն թէև գնում էր, բայց ընկել էր խոր մտածմունքի մէջ, կասկածելով թէ ամեն մի ըոպպէ փորձանք կը պատահի իրան, այսպէս անցաւ մի ժամ մինչև որ ներս եկաւ խոհարարուհին, բերելով ընթրիքի լի ափսէն և զանազան խմիչքներ, որից յետոյ սկսեցին ախորժակով ուտել ու խմել, Մարուսեայն սկզբից չէր ուզում գործ ածէր խմիչք, բայց շատ խնդրելուց յետոյ նա լսեց մէկը, երկուսը և շարունակեց անթիւ բաժակները: Չանցաւ մի երկու ժամ որ ներս եկաւ աղախինը, ձեռքին բռնած մի հեռագիր, որը մօտենալով հիւրին, ասեց, Պարոն, Ձեզ հեռագիր ունիք, պարոնը իսկոյն կարող հեռագիրը վեր կացաւ իւր տեղից ու ներս բերւն խնդրելով շտապում է գնալու, որովհետև ծնողներից է ստացել հեռագիրը պիտի գնա ժամի 10-ի երկաթուղով:

Յտեսութիւն, ասելով դուրս գնաց:

Մարուսեանն ևս կանգնեց իւր տեղից և ուզում էր որ գնար տունն, արդէն ուշ էր, բայց գրաֆին քնքուշութեամբ գրկելով Մարուսեային ասաց, մի քիչ էլ համբերիր հեղեակս ինչու ևս այդքան շտապում չէ որ մենք հաղիւ ենք ձեռք բերել այսպէս ուրախ ժամանակ և ոչ ոք մեզ չի տեսնիլ և չի խանդարի, խընդրում եմ քեզանից գնանք իմ սենեակս և քիչ հանգստացիր յոգնած կը լինես և յետոյ միասին կը գնանք ձեր տունն:

Թէև Մարուսեան չէր ուզում հնազանդել այդ պարոնին, յիշելով իւր մօր խօսքերը թէ որդի զոյ՞ջ կաց այդ պարոնից որ չամբողջացնի քեզ:

Իզուր էր չարչարվում Մարուսեան պազանի ձեռքում, քանի որ գինին ցոյց էր աւել իւր զօրութիւնը Մարուսեան հաղիւ զգում էր որ արդէն իրան ազատութիւնը կտրւել է այստեղ, և աղաչելով հառաչում էր բաց թող խնդրում եմ քեզ «Փանս» չէ որ դու ինձ երգւել ևս որ մնաս քո պայմանիդ մինչև վերջին ժամը, բայց Փանսը ոչինչ չէր պատասխանում այլ ամուր սեղմելով իրան քաղցր համրոյրներ դրօշմում Մարուսեային.—Եւ անա Մարուսեան վերկացաւ իւր տեղից բայց գողում էր ամբողջ մարմնով թէ ինչ արեց, կամ ինչով պիտի վերջանա այդ արած սխալը:

Մի ժամից յետոյ Փանսը տարաւ Մարուսեային իրենց տուն մօտենալով դուանը Մարուսեային շտապ քայլով մօտեցաւ, հանելով շորերը պարկից, բայց դողում էր խեղճը նա գնաց մօր սենեակը տեսաւ իր տկար մայրն քնած է, նա դարձեալ գնաց և պարկից


ԿՐԻՍՏԻՆՆԱ
 ՌՕՆՏՈՆՔԵԴԵՆՆԻ
 Առաքման Կայս
 ՍՍՏՐ

Քիւր տեղը բայց չէր կարողանում հանգստանալ և քունը չէր տանում մտաբերելով այն բուպէն թէ ինչպէս պիտի պատասխան տայ իւր ծնողներին քանի որ հայրը չէր իմանում թէ իւր գոււտըրը ծանօթացել է մի գրաֆի հետ և արդէն անբողբացրել է իրան, նա տապալւեց իւր տեղում մինչև որ լոյսը քացեց և երբ վերկացաւ առանց մօրն տեսլու իւր հետ պատահած գէպքը, գնում է խանութ իւր գործին:

Մարուսեայի հայրը արդէն եկել էր գնացած տեղից, գոտ համար էլ Մարուսեան չէր կարողանում ամեն օր տեսնել գրաֆի հետ շաա ուշ ուշ էր տեսնուում և միշտ էլ ասում էր գրաֆը, աննօզ եղիր անպատճառ ես գործը պոււիս կը բերեմ, դեռ ևս ծնողներս համաձայն չեն այս բանին, և հաւատում էր Մարուսեան այդ խաբերայինն:

Մարուսեան սկսեց օրէց-օր դռնատուել նիհարել և համարեայ թէ իրան կորցրածի պէս էր գողում, միշտ մայրն հարցնում էր թէ ինչ է պատահել քեզ քալց նա միշտ խաբելով մօրը թէ ոչինչ չկայ, տկար եմ կանցնի շուտով, չանցնելով մի քանի օր, հայրն իմանալով գոււտրի արած քայլը բարկացաւ և կանչելով գոււտրին դուրս արեց իւր արատաւորված դուտրին, որի տուն մնալը աւելորդ էր համարում ևս ջրը, և նա դուրս շարտեց իւր տանից: Անօգնական Մարուսեան դիմեց ուղղակի գրաֆի տունը և զանգահարեց դուռը, բացին և դուրս եկաւ մի տիկին որը հարցրեց թէ ինչ էր ուզում, Մարուսեան ուղղակի առանց աւշադրութիւն դարձնելու ուղղում էր գէպի գրաֆի

36045-66



սենեակը, երբ նրա ճանապարհը կտրեց դուռը բաց անող տիկինը բարկացած ասեց թէ ինչպէս էք դուք համարձակուում առանցի իրաւունքի գնալ, Մարուսեան բացադրեց որ ցանկանում է տեսնել գրաֆի հետ:

Աղախինն չարացած ասաց որ գրաֆը գնացել է ինչ որ քաղաք թէ երբ պիտի վերադառնայ յայտնի չէ: Մարուսեան գլխակոր վերադարձաւ տուն, բայց ինչեր չէին անցնում նրա մտքովը, մտածում էր նա, թէ կարող է գնացել է որ համաձայնութիւն ստանայ ամուսնանալու իր հետ բայց մէկ էլ մտածում էր ինչու նամակ չէ ուղարկել կամ չէ թողել, նա իսկոյն տուն հասնելուն պէս հարցրեց մօրը թէ նամակ չունէ իրան, բայց ի դուր էր սպասում Մարուսեան գրաֆին:

Առաւօտեան վաղ Մարուսեան գնաց խանութ և շատ ուրախ անցկացրեց իւր օրը, խանութը փակելուն պէս նա գնաց այնտեղ որտեղ նրանք միշտ տեսնում էին, բայց մեծ եղաւ նրա զարմանքը երբ որ անցան ժամեր բայց չկար գրաֆը, այսպէս շարունակւեց մի քանի օրեր, բայց ոչ մի տեղեկութիւն չկար գրաֆից:

Մէկ օր Մարուսեային յանձնեցին մի բան որ տանէ մուշտարու տուն, և նրա ճանապարհը գրաֆի տան առաջովն էր, անցնելու ժամանակ նա յանկարծ տեսաւ լուսամուտի առաջ կանգնած էր Գրաֆը, Մարուսեան իսկոյն դիմեց գրաֆի սենեակը, բայց նրան կանգնեցրեց աղախինը և թոյլ չը տւեց որ գնա սենեակը, ասելով որ գրաֆն այստեղ չէ գնացել է դեռ չէ վերադարձել:

Մարուսեան զարմացած այդ խօսքից բացական չեց, որ սխալուում էք կարող է դուք չէք նկատել նրայ գալը, ես նոր տեսայ նրան լուսամուտի առաջը կանգնած, և դարձեալ առանց ուշ դարձնելու ուզում էր ներս գնալ, երբ յանկարծ դուրս թուաւ մի առնելի մարդ, որը այնպէս պիտի բղաւեց օրիորդի վրա, թէ ինչ ես գլուխներս ցաւեցնում, ձեզ որ կինս ասում է տանը չէ, ուրեմն աւելորդ է ձեր կանգնելը, իսկ եթէ որ դուք չէք ուզում որ մենք ուրիշ կերպ հեռացնենք, ես կտրող եմ այդ ևս գործ դնել, ասաց ու դուռը ծածկելով գնացին տուն, Մարուսեան լալով այդտեղից հեռացաւ և նա նոր իմացաւ իր թշաւութիւնը:

Նա գնաց կատարեց իւր յանձնարարութիւնը և վերադարձաւ խանութ, բայց զարմացան խանութի գործակատարուհիները Մարուսեայի գունատուած դէմքը տեսնելով, իսկոյն հարցրին թէ Մարուսեայ խօսմ տկար չեա: Մարուսեան պատասխանեց որ քիչ տկար է այսօր: Գալով տուն արդէն ամեն բան իմացել էր հայրը, իսկոյն դուրս շարտեց տանից ձեռնելով, թէ գնա ես չեմ ուզում որ իմ տանս ունենամ մի ատաւորուած աղջիկ, շատ էր խնդրում մայրը որ ներէ հայրը գուտարի արած այդ քայլը, բայց անխիղճ հայրը չուղեց նոյն իսկ լսել այդ աղաչանքը, և բռնելով ձեռքից դուրս շարտեց իւր հայրական տանից:

Մարուսեան արդէն դուրս էր որ շուտով մայր էր դառնալու: Նա յոգնած գնաց այդին նստեց և ուշաթափւած վայր է ընկնում, անցնում է մի քանի ժամ Մարուսեան ուշքի է գալիս տեսնում է որ պարկած է

մի գեղեցիկ սենեակում, մօտին կանգնած մի միջահասակ պարոն, որը ձեռքում բռնած ունի մի շերտ նաշաղիրնի սպիրտ որով նա օգնում է Մարուսեային: Մարուսեան հիասթափւում է երբ տեսնում է օտար սենեակում է գտնւում ինքը իսկոյն կանգնում է տեղից, և շնորհակալութիւն յայտնելով ուզում է գնալ բայց պարոնը կանգնեցնելով Մարուսեային ասում է յարգելի աղջիկ մնացէք ինձ մօտ ես մի օրիորդ ունիմ նրա մօտ գու կապրես այստեղ ինչպէս իմ հարազատ որդին և տեսնում եմ որ դուք շուտով մայր պիտի լինիք:

Մարուսեայի համար թէև գժւար էր այդ խնդիրը լուծելը բայց քաղցածութիւն նրան ստիպեց համաձայնելու և նա մնաց այդտեղ պարոնի տանը:

Չանցաւ 2 ամիս Մարուսեան արդէն ծնաւ մի գեղեցիկ աղջիկ որին նա այնպէս սպանում էր որ կարծես թէ նա չէր զգում որ որք երեխան որ մեծանաց արդեօք չի հարցնելու թէ մայրիկ ով է եղել իմ հայրս կամ որտեղ է ծնւել ինքը, երբ անցան մի քանի ամիսներ, մէկ օր բարերար պարոնը Մարուսեային հրաւիրում է իւր սենեակը և ասում է գիտես ինչ եմ մտածել քո մասին եթէ ուզում ես միշտ այդպէս երջանիկ ապրել պիտի համաձայնես որ ինձ հետ ապրես, ինչպէս կին, մի քանի տարիներից յետոյ քեզ ամեն միջոց կտամ ազրելու կարող ես որ կողմն ուզում ես գնալ:

Դարձեալ նորոգւեց Մարուսեայի ցաւերը նա չկարողացաւ տանել այդ անվայել խօսքերը, և վեր-

ջրեց իւր մանկանը, և հեռացաւ այդ տանից: Մարուսեան լենլը դեռ մի քանի բուրլի վող, լքով կարող էր մի քանի ժամանակ ապահով ապրել իւր երեխայի հետ, մինչև որ գնար ծառայելու: Նա գնաց քաղաք վարձեց մի փոքր սենեակ որտեղ նա պատրաստեց իրան համար փոքրիկ կացարան առաւօտեան վաղ նա քաղաքում որոնում էր ծառայութեան մի տեղ, երբ յանկարծ նա պատահեց իւր առաջա խաղէյնին, որը իսկոյն մօտենալով Մարուսեային հարցրեց նրա դրութիւնը բայց Մարուսեան ամօթից չէր կարողանում որ նայիւ նրա երեսին, խաղէինը հասկանալով ամեն բան ասաց, Մարուսեա մի ամաչիւր փորձանքը ամեն մարդու գլխովն էլ անցնում է, եղածը եղած է իսկ հիմա եթէ կուգես նորից ծառայել ես պատրաստ եմ ընդունելու ինձ մօտ, դու ինձ համար շատ հաւատարիմ ես: Մարուսեան համաձայնեց գնալ ու ծառայել դարձեալ իւր հին խաղէինի մօտ, միւս օրը նա եկաւ և սկսեց խանութում առևտուր անել:

Երկար ծառայութիւն անելուց յետոյ մէկ օր երբ խանութը փակելում էին խաղէինը տասց թէ օր Մարուսեայ, անա այս պակուպկան վերցրէք գնանք Մարուսեան հնազանդւեց խաղէյնին և գնացին միասին մինչև տուն, ճանապարհին նա յանկարծ բռնում Մարուսեայի ձեռքը, մօտեցնելով իւր շրթունքներին ամուր համբոյրներ էր գրոշմում, և Մարուսեան ապուշ կտրած նայում էր թէ ինչ է կատարւում իւր հետ.....

Վերջապէս բացաղրեց խաղէինը ցանկանում եմ

որ դու ինձ հետ ապրես, թէ խէլօք լինես կը համա-
 ձայնեսս և դու կստանաս ինձ մօտ մեծ պաշտօն ու
 զրանով դու կունենաս մեծ ապագայ, և դու հանգիստ
 կաց որ ես այդ գաղտնիքը ոչ ոքի չհմ յայտնի:

Մարուսեան մէկից մէկ մերժեց այդ առաջար-
 կութիւնը թէ ես չեմ կարող համաձայնել այդպէս
 քայլ անելու: Սովորական Մարուսեան զնաց առա-
 ւօտեան խանութ, հանելով իւր վերաբերւել և բեղի-
 կուլը քաշ է անում ներսի սենեակում ինք գնում է
 իւր տեղը մուշտարիների մօտ: Այդ ժամանակ խաղէ-
 յինը վերցնում է մի 1000 բուրլիանոց չէք և գնում է
 Մարուսեայի բեղիկուլի մէջ և ինք գնում է կասսան
 համարելու, համարելուց յետոյ կանչում Մարուսեային
 և ասում է թէ մի 1000 բուրլիանոց չէք է կորել
 կասկածում եմ քո վրայ և իսկոյն հեռախօսով կան-
 չում է ոստիկաններին որ բանդարէնն Մարուսեային
 գալիս են դատիկանները որ տանեն Մարուսեային,
 Մարուսեան սլորում է լաց լինել, այդ ժամանակ կան-
 չում է խաղէյինը և ասում է թէ, եթէ դու կը համա-
 ձայնես իմ առաջարկութեանը ես քեզ ազատել կը
 տամ, Մարուսեան խնդրում է որ ման գան իրան
 գրպանները եթէ որ գտնեն այդ չէքը այն ժամանակ
 ինչ վճիռ ուզում են թող տան, եթէ մեղաւոր է ինքը:
 Խաղէինը իսկոյն գնում է վերցնում է օրիորդի վերաբ-
 կուն և բեղիկուլը միջից հանելով 1000 բուրլիանոց
 չէկը և իսկոյն Մարուսեային յանձնում է ոստի-
 կանութեանը:

ԵՐԵՔ ԱՄՍԵԱՅ ԲԱՆԴԱՐԿՈՒԹԻՒՆ

Թողեց Մարուսեան իւր երիտան անտէր, իսկ
 քնքը, զնաց և մտաւ խոնաւ ու մութ բանդը անց-
 նում են օրերը բայց դեռ չէ լրանում Մարուսեայի
 քանդարկութեան ժամանակամիջոցը:

Շատ տանջելուց յետոյ նա ընկաւ փայտեայ
 անկողնու վրայ և փակելով իւր գեղեցիկ աչքերը, որ
 չկարողանայ տեսնել այն ազարուութեան ճանապարհը
 որից նա զուրկ է արդէն:

Առաւօտեան ժամի 10-ին եկ աւ անգապեալ և
 կանչելով Մարուսեային գրագրատուն որտեղ կանգնած
 սպասում էր մի երիտասարդ փաստաբան, Մարուսեան
 գլուխը քաշ գցած մօտեցաւ պարոնին և հարցրեց թէ
 ինչ էք կամենում, պ. փաստաբանը նախ ներողու-
 թիւն խնդրեց ապա բացաբեց որ ինքը մանելով օրի-
 որդի դրութեան մէջ և պարաք է համարել պաշտպանել
 մի անօգնական օրիորդի որը իւր պատիւը պաշտպա-
 նելու համար ընկել է այս խաւար բանդի մէջ, թող-
 նելով ուրիշների ապաստան իւր միակ դուստրին:

Մարուսեան չէր իմանում թէ ինչպէս շնորհակա-
 լութիւն յայտնի այդ պարոնին, որը մտնում է իւր
 դրութեան մէջ և ուզում է ազատութիւն տալ իրեն:
 Փաստաբանը մանրամասն տեղեկանալով գործի մասին
 թողեց և զնաց տուն: 10 օրից յետոյ Մարուսեային
 կանչում են դատարան, և իսկոյն մեղադրական թերթը
 զարդում է Մարուսեայի, բայց երիտասարդ փաստաբանը
 ինչքան որ եռանդ ունէր գործ դրեց մինչև Մարուսե-

եային արդարացրեց, և գալով բանդ հաւաքում է իւր ունեցած չունեցած բաները և շտապում է տուն, որ գրկի իւր կարօտեալ զաւակին, ուրախութեանը չափ չկար, Մարուսեան անվերջ համբոյրներ էր ապիւս երեխային և լացող աչքերից վազում էն կարծես աղի արտասուքները:

Առաւօտեան վաղ վեր է կենում, թէյ խմելուց յետոյ պատրաստում է որ գնայ քաղաք գործ գտնելու, բայց յանկարծ դուռը բացում է և ներս և գալիս մի աղախին օրիորդ, որը ապիւս է Մարուսեային մի ծրար և իսկոյն հեռանում է, Մարուսեան բաց է առնում ծրարը և մեծ է լինում նրա զարմանքը երբ որ նա տեսնում է ծբարի մէջ մի պաշկա թղթադրամ և մի փոքրիկ գապիսիայ, որի մէջ գրած էր այսպէս:

Յարգելի օրիորդ:

Խրդրում եմ ընդունես այս իմ ուղարկած փոքրիկ նւէրս և խնդրում եմ չնեղանաք, այս իմ արած քայլի վրայ, որ ես պարտ եմ համարել մինչև վերջը օգնել ձեզ:

Յարգանք X.

Մարուսեան այդ ստացած փողիցը մի քանի բուրլի վերցրեց և գնաց շուկա, այնտեղից գնեց երեխայի համար մի քանի կտոր խաղալիքներ, շորեր և գոշիկներ, իրան համար շորեր շէտեայ և այլն, գնաց տուն ուրախ ածեց երեխայի առաջ բերած խաղալիքները, իսկ ինքը գնաց ծառայութիւն փնարելու: Երկար մանգալուց յետոյ մօտեցաւ մի կանդիտերի:

խանութի, և հարցրեց ի՞նչ գործակատրուէի հարկաւոր չէ ձեզ, խաղէինը տեսնելով Մարուսեայի թշուա դէմք խսեց յն տեղ տեց ծառայութեան: Մարուսեան սկսեց արիւշան գործել խանութում մինչև ժամի 10-ը խանութ փակելու ժամանակ խաղէինը սուպրակի մէջ պատրաստեց մի քանի հաս քաղցրեղեններ և տալով Մարուսեային որ տանի իւր երեխային, Մարուսեան ատնելով այդ ստացած ուտելիքները շտապեց դէպի տուն: Հասաւ տուն տեց երեխային բերած բուրլիները: Միւս օրը դարձեալ գնաց իւր տեղը ծառայելու այսպէս շարունակեց ամիսներ, մէկ օր երբ Մարուսեան պարապած էր մուշտարիներէ հետ յանկարծ տեսավ որ իւր սուաջին կանգնած է իրան հին խաղէյինը, որը բանդ էր նստացրել Մարուսեային: Մարուսեան իսկոյն գունատեց որ տեսաւ իրան բանդ նստացնող այդ խաղէյինին, նա իսկոյն ուզում էր հեռանալ բայց պարոնը իսկոյն պահանջեց 2 ֆունտ կանֆետ, և Մարուսեան սախլած եղաւ յետ դանաւու և պահանջած կանֆետը տալու: Մարուսեան մօտեցաւ որ կանֆետը քաշի այդ ժամանակ այդ պարոնը մօտեցաւ և կամաց ասաց, եթէ իմ պահանջածը չը կատարես ես քո խաղէյինին կասեմ որ դա ինձ մօտ գողութիւն արեց, և ես զրան բանդ նստացրի ու քեզ այստեղից դուրս կանեն:

Մարուսեան շատ խնդրեց որ չասէ այդ բանը, և թէ ոչ դուրս կանեն իրան գործից, իսկ ինչ մնում է ձեր ասած բանին ես չեմ կարող համաձայնել քանի որ ես արդէն մի անգամ խաբուեցի, երկրորդ անգամ

չեմ կարող այդ քայլը անել որը արդէն ինձ զրկել են նոյն իսկ հայրական տանից, խնդրում եմ հանգիստ թողնէիք ինձ և դնացէք ձեր գործին. բայց անգութ մարդը չը լսեց օրիորդի դառն խնդրածքը և ուղղակի դնաց խանութպանի մօտ ու պատմեց ամեն բան, խանութպանը իսկոյն կանչում է Մարուսեային և աւում է որ ինձ գող գործակատարուհի հարկաւոր չէ կարող ես հեռանալ իմ մօտից և տալիս է իսկոյն հաշիւը ու ճանապարհ դրում:

Դարձեալ Մարուսեան մնաց անգործ այդ անիրաւ խաղէկինի ձեռքից, որը միշտ հետեւում էր նրան որ դարձեալ կարողանա Մարուսեային ուղիղ ճանապարհից հանի, բայց Մարուսեան միշտ ստիպւած էր լինում չհամաձայնել այդպիսի քայլ անելու նա իւր պատիւը պաշտպանելու համար միշտ մնում էր առանցի գործի:

Բայց մինչև երբ պիտի կրկնւի Մարուսեայի հետ այդ անտանելի դժուրութիւնը, ինչ անի նա որ կարողանայ ուրիշ կանանց նման ազատ ապրի և ինքը, չէ որ նա արդէն երեխայ ունի, որի համար անպատճառ պիտի աշխատի իւր մայրը որ քաղցածութիւնից չը մեռնի, բայց Մարուսեան միայն լացով էր հանգստացնում իւր բոբբոքւած սիրտը, երբ նա ամեն անգամ նայում էր երեխային, մտաբերում էր իւր անցեալը որ կանգնած ծովափին ուղում էր վերջ տար իւր կիսնքին բայց այն ձայնը որ կանչում էր նրան...
Ոճրագործ...

Երեխան.. երեխան...

Աստուած իմ Աստուած ինչու դու արգելեցիր ինձ ազատելու այն դառն դրուժիւնից որտեղ ինձ ապրելու, այլևս հնարաւորութիւն չկայ անգութ մարդիկ հետևում են ինձ և չեն թողնում որ կարողանամ տանջանքով աշխատել մի քանի կոպէկ որով կարողանամ ապրեցնել իմ միակ որդուս:

Մարուսեան տխուր ու տրտում գալիս է տուն վերցնելով երեխային իւր գիրկն ու սկսում է դառն կերպով լաց լինել իւր անբաղդութեան վրայ, նա անիծում էր իւր գեղեցկութիւնը, որ իրան միշտ անբաղդութեան մէջ է քցում, միթէ էս այնքան պիտի տանջւեմ այս անտանելի դրութեան մէջ մինչև որ իջնեմ գերեզման:

Բայց ինչ պիտի լինի իմ երեխաս իմ մահից յետոյ չէ որ նա չունի ծնող հայր, որ կարողանայ նրա հովանաւորութեան տակ ապրի և չը թշուառանայ իրան պէս, այդպէս նա ընկած խոր մտածմունքի մէջ և չէր կարողանում որոշել թէ ինչ միջոց գանի որ կարողանա ապրեցնելու իւր միակ որդուն որ չզգայ ոչ որբութիւն ոչ էլ սովածութիւն և այլն:

Շատ մտածելուց յետոյ նա վճոհեց դարձեալ դնալ քաղաք ծառայութիւն գտնելու և մի քանի ժամից յետոյ նա գտաւ ծառայութիւն և մինչև երեկոյ լաւ կատարեց իրան գործը ինչ որ նրան յանձնարարել էին, այդպէս նա շարունակեց ծառայել 2 թէ 3 ամիս և ահա մէկ օր խաղէկնը առաջարկութիւն արեց թէ կիսնս գնացել է ուրիշ քաղաք և շատ ուշ կը վերադառնայ գնանք ինձ մօտ ընթրիք անելու ու ձեզ հետ

առանձին խօսակցութիւն բռնեմ ձեր ծառայութեան մասին շատ երկար չի տեւելու, ընդամենը մէկ կամ երկու ժամ և այնուհետև ազատ կը լինիք, և այսպէս խորամանկ մարդը ուզում էր գցի թակարդի մէջ անմեղ Մարութեային:

Երեկոյեան խանութը փակելուց յետոյ նրանք գնացին խաղէյինի տունը որ ընթրեն և խօսեն ծառայութեան մասին, հասնելով տուն նրանք նախ ընթրեցին և ապա խաղէյինը հրաւիրեց իւր կարօնները որտեղ նրանք պիտի խօսային. Մարութեան մտաւ աննեակի, խաղէինը աթոռ առաջարկեց, որ նախ Մարութեան, նւաեց և ուզում էր հարցնել զործի մասին երբ յանկարծ խաղէինը բողոքելով Մարութեայի ձեռքը մօտեցնում է շրթունքներին որ համբուրի բայց Մարութեան ձշարով յետ է կանգնում և զարմացած ննում է կանգնած թէ ինչ է ուզում անի:

Սաղէյինը չորում է Մարութեայի ասաջ և բորբոքած ասում, Մարութեայ կուզես սպանիլ ինձ բայց պիտի համաձայանես ինձ հետ, ես արդէն այս քանիօր է ցնդւածի պէս եմ, քո գեղեցկութիւնը ինձ խելքից հանել է:

Բայց Մարութեան արդէն հասկացաւ խաղէյինի մտադրութիւնը և չէր իմանում թէ ինչ անի վերջապէս չորքելով խաղէյինի ասաջ և աղաչել սկսեց թէ խնդրում եմ որ մի հանէք ինձ խելքից ես արդէն առանց այն էլ անբաղդացած եմ որից ստիպւած ես պիտի ասնջեմ մինչև իմ կեանքիս վերջը, բայց միթէ դուք միշտ ուզում էք որ անբաղդին անբաղդացնեք:

աչ թէ բաղդաւորեցնէք, չէ որ ձեզ յայտնի է իմ դրութիւնը, խնդրում եմ թոյլ տաք որ գնամ մի երեխայիս մօտը, տանն սենեմ իմ որբ երեխայ որի համար ես այնքան պիտի տանջւիմ. մինչև որ նա մեծանայ և զանի իրան ուրախ աղաղայ որով կարողանայ իւր սրբութիւնը մոռացած լինի և չը նախատի ինձ, որին ես եմ դարձեալ պարտական:

Մարութեայ դարձեալ խնդրում եմ համաձայնեցիք ինձ հետ, եթէ չէք ուզում որ ծառայութիւնից զրկւած լինեք, դուք ինձ մօտ լաւ վարձատրութիւն կը ստանաք և յաւիտենական ինձ մօտ կենաք ծառայելու, իսկ եթէ ոչ, վարանից կարող էք դուք գնալ ձեզ համար ուրիշ ծառայութիւն գտնելու ես ձեզ այսօր ժամանակ եմ տալիս լաւ մտածելու և պատահան տալու ինձ, բայց ես կտրծում եմ որ դուք անպատճառ պիտի համաձայնելք իմ առաջարկութեանը, որովհետև ամեն մի մարդ աշխատում է լաւ ապրելու առածն ասում է.

Չունեցողը ունեցողին միշտ խոնարհում է:

Լացականած թողնում է Մարութեան խաղէյինի քնակարօնը և տխուր ու արտում գնում է տուն, քրկում երեխային և շատ խոր մտածում է թէ ինչ պիտի լինի իւր վերջը, բայց ոչինչ չի դուրս գալիս մտածելուց, և ընթրելուց յետոյ պարկում է որ հանդստանայ, բայց չէր անցել մի կէս ժամ Մարութեան զգում էր իրան բոլորովին թոյլ կարծես շարքած զինէր ամբողջ մարմինը և այդպէս նա տապալուելով անկողնու մէջ մինչև որ լոյսը բացւեց, և նա գնաց

խանութ որ շարունակի ծառայելը. բայց անգուժ
խաղէինը խկոյն հարց տւեց թէ ինչ էք մտածել
համաձայն էք թէ ոչ իմ առաջարկութեանը:

Ոչ, տւեց կտրական պատասխան Մարուսեան,
խաղէյինին ես չեմ կարող հաշուել ձեզ հետ:

Ուրեմն ուզում էք որ ձեզ հեռացնեմ, այո:

Այո:

Ստանալով ծառայած վարձը դուրս գնաց խանու-
թից և թոյլ ոտներով ուղղւեց յէպի տուն, դարձեալ
հազար ու մի բան մտածելով:

Հազիւ հասաւ տուն և խկոյն մտաւ անկողին
և սառը քրտինքը տւեց Մարուսեայի վրայ, նա ամ-
բողջ օրը ոչինչ չը կարողացաւ ուտել և խմել և տան-
ջւում էր: Չունէր Մարուսեան մի հաւատարիմ որ
կարողանար օգնութիւն անէր Մարուսեային հիւանդ
ժամանակ:

Նա կանչեց հարեանի կնոջը և յանձնելով երե-
խային նրան, տալով նրան իւր ունեցած մի քանի
բուրլինները ասելով. քոյրիկս խնդրում եմ որ վերցնէք
այս փողը և միակ որբիկիս օրը պիտի զրկւի և մայ-
րից, որը զուրկ է արգէն հայրից, պահիր այնքան որ
մինչև տուածս փողը կը հերիքի նրա վարձադրու-
թեանը, իսկ այնուհետև թողնում եմ ձեր խղճին կամ
գտէք մի բարեբար որը գուցէ թէ խղճայ և վերցնի
իր մօտ մենչև որ հասկանայ իւր սվ լինելը կամ ինչ
է պարտական նա անելու, որ նա պարզ երեսով
ապրի այս թոյնաւոր աշխարհում:

Խնդրելով հարեանի կնոջը որ մօտեցնի երեխա-

յին իրան մօտ որ վերջին անգամ հասրուրի երեխա-
յին, որից նա արգէն բաժանւում է, գրկելով երե-
խային համբուրեց և յանձնելով հարեանի կնոջը և
վերջին խօսքերը այս եղաւ Մարուսեայի:

Ով ազնիւ մարդիկ մի դիմէք սէրին.
Մէրը ձեր գլխին փորձանք կը բերի,
Մէրը շատ մարդու մահ է պատճառում
Շատ ու շատերին անդունդ գլորում:

Մէրին դիմողը թող լաւ հասկանայ,
Թէ ինչ է սէրը, կամ ինչ է անում,
Մտտող սրտերը քարոքանդ անում,
Եւ վաղաթառամ գերեզման տանում:

Այսպիսով նա վերջ տւեց իր թշաւ կեանքին և
յանձնելով հոգին Աստծուն նա այն ժամանակ զգաց
իրան ապահով և հանգիստ կերպով դրեց ձևքերը
կուրծքին և թողնելով միակ որդուն ուրիշների ապաս-
տան, իսկ ինքը:.....



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Ք Ի Ի Ն

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի
ԵՐԵՒԱՆՈՒՄ

„ՀԱՇԻՇ“

Գրական Գեղարվեստական ԱԿՄԱՆԱԽ

Գինը՝ Երևանում 20 կոպ. Երևանից դուրս 25 կոպ.

Հասցեն՝ Զրивань типографи „Душеч.“ Сааку Вабаяну՝ կամ
Въкиловская № 23 Е. Согомоняну և հայ գրականության քիչ



3669

54

инд

арх
6068
ИНСТИТУТ
БОЛТОНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

4206 ||

2013

